

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՆԵԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Քաղաքացիավարական ընթացակարգերի զարգացման արդի ժամանակաշրջանում առանցքային նշանակություն ունեն արհեստակցական միությունները, որոնց ակտիվ գործունեությամբ է պայմանավորված սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետությունը: Հասարակության սոցիալական համակարգի կայունության, սոցիալական ռեսուրսների և որոշումներ ընդունելու արդյունավետության բարձրացումը մեծապես պայմանավորված է սոցիալական գործընկերության սուբյեկտներով ու ընթացակարգերով: Այնուհայտ է, որ սոցիալական քաղաքականությունը պետության գործունեության առավել հակասական ոլորտն է, որը քաղաքականության սուբյեկտներից պահանջում է առաջնորդվել փոխհամաձայնության, փոխզիջման, արդարության ու հանդուրժողականության սկզբունքներով: Սոցիալական քաղաքականության ոլորտում պետությունը պարտավոր է համատեղել տնտեսական արդյունավետությունը, սոցիալական խնդիրների կարգավորման ընթացակարգերն ու հանրային կայուն զարգացման հեռանկարները: Նմանօրինակ իրավիճակներում հնարավոր է ապահովել շուկայական տնտեսության սոցիալական ուղղվածությունը, բարեկեցության ու սոցիալական բազմաբնույթ հարցերի լուծման գերակայությունը:

Սոցիալական գործընկերության գաղափարախոսությունը «հիմնված է փոխզիջման, համագործակցության, փոխադարձ պատասխանատվության սկզբունքների վրա՝ անցում կատարելով աշխատանքային վեճերի արմատական առճակատման լուծման միջոցներից իրավական, համաձայնեցման, հաշտեցման ընթացակարգերին»¹: 1960-ական թվականներին սոցիալական գործընկերության ընթացակարգերն առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվել են Գերմանիայի, Ավստրիայի և եվրոպական այլ երկրների իրավական համակարգերում, որոնք արդյունք էին սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման արդյունավետ եղանակների երկարամյա ուսումնասիրությունների²: Իսկ կոլեկտիվ պայմանագրերն առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվել են 1907 թ. Դանիայի քաղաքացիական օրենսգրքում, այնուհետև՝ Շվեյցարիայում (1911 թ.), Նորվեգիայում (1915 թ.), Գերմանիայում (1918 թ.), Ֆրանսիայում (1919 թ.) և ԱՄՆ-ում (1935 թ.): Հիմնվելով սոցիալական գործընկերության կայացման միջազգային փորձի վրա՝ վերլուծաբանները դիտարկում են չորս հիմնական տեսակներ՝ գերմանական, սկանդինավյան, ամերիկյան և ճապոնական³: Սոցիալական գործընկերու-

¹ Сорокин С. А. Социальное партнерство: актуальные проблемы ведения коллективных переговоров // "Труд. Профсоюзы. Общество", 2006, № 1, с. 4.

² Տե՛ս Нехода Е. В. Группы интересов в системе социального партнерства // «Экономика», 2008, № 1 (2), էջ 17:

³ Տե՛ս Модель И. М., Модель Б. С. Социальное партнерство в России // «Социс», 2000, № 9, էջ 43:

թյունը հանրային գործընկերության տեսակներից է, սոցիալ-աշխատանքային հարաբերությունների կարգավորման եղանակներից մեկը, որի նպատակն է ապահովել սոցիալական խմբերի իրավահավասարությունը, ներառվածությունը, մասնակցությունն ու շահերի հավասարակշռությունը: Այն սոցիալական ինքնատիպ դիսկուրս է ու քաղաքացիավարական վերահսկողության երաշխիք, ինչպես նաև հանրային ինստիտուտների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխադարձ պատասխանատվության անհրաժեշտ նախապայման ու ընթացակարգ: Սոցիալական գործընկերությունը, երկխոսությունը, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, մարդկային կյանքի որակը կազմում են քաղաքացիավարական հասարակությունների սոցիալական մոդելների առանցքը: Այն ապահովվում է սոցիալական պատասխանատվության և սոցիալական վերահսկողության ընթացակարգերով, որոնք քաղաքակիրթ սոցիումի առանցքային տարրերն են: Դրանք պայմանավորում են քաղաքացիավարական սուբյեկտների փոխգործակցության պատրաստակամությունը, ընդունվող որոշումների կառուցողականությունը, հանրագուտ ձգտումներն ու ներուժը: Այս առումով հրատապ նշանակություն ունի արդյունավետ սոցիետալ համակարգի և հանրային քաղաքականության տարբեր ոլորտներում սոցիալական գործընկերության կայացումը, որը հասարակության և անհատների սոցիալական պաշտպանվածության ինստիտուցիոնալացման արդյունք է: Այս հիմնահարցերի համատեքստում դիտարկում են նաև «երկխոսության որոշումները»⁴, սոցիալական աուդիտը, գործընկերային մասնակցությունն ու կառավարումը, սոցիալական պաշտպանության ինստիտուցիոնալացումը: Սոցիալական գործընկերության սուբյեկտների հիմնարար իրավունքներն ու փոխադարձ պատասխանատվությունն անրագրված են Աշխատանքի համաշխարհային կազմակերպության մի շարք կոնվենցիաներով: Դրանցում ամրագրված դրույթների ու սոցիալական գործընկերների փոխադարձ պարտավորությունների կատարման վերահսկողության ընթացակարգը սոցիալական աուդիտն է: Ըստ Ա. Սվիրիդովի՝ «սոցիալական աուդիտը գործատուի սոցիալական միջավայրի պայմանների վերլուծությունը, ստուգումն ու վերաքննությունն է՝ նպատակ ունենալով բացահայտել սոցիալական ռիսկերի գործոնները և առաջարկություններ մշակել դրանք նվազեցնելու համար»⁵:

Ջարգացած երկրներում պետության սոցիալական գործառույթների ընդլայնման ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների ակտիվ փոխներգործությունը զուգահեռ նախադրյալներ է ստեղծում կայուն զարգացման, կյանքի որակի, պատասխանատվության, պաշտպանվածության, անվտանգության ու սոցիալական արդարության գերակայության համար: Նմանօրինակ իրավիճակներում քաղաքացիավարությունը դառնում է սոցիալական մոդելի, ներպետական և գլոբալ սոցիալական քաղաքականության չափանիշը: Դեռևս XX դ. 50-ական թվականներին Յ. Բոուենը մշակեց բիզնեսի սոցիալական պատասխանատվության մոտեցումը, որի համաձայն՝ գործարարները պետք է իրականացնեն այնպիսի քաղա-

⁴ Пригожин А. И. Диалогические решения // "Общественные науки и современность", 2004, № 3, с. 52.

⁵ Свиридов А. К. Социальный аудит – важнейший элемент взаимной ответственности участников социального партнерства // "Теория и практика общественного развития", 2007, № 1, с. 35-36.

քականություն, ընդունեն այնպիսի որոշումներ և հետևեն վարքի այնպիսի կանոնների, որոնք առավել ցանկալի են հասարակության նպատակների ու արժեքների տեսանկյունից⁶:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հետխորհրդային երկրներում արմատապես փոխակերպվեցին հասարակական կյանքի ոլորտներն ու քաղաքականությունը, սոցիալական կարգը: Այդ հասարակությունները հայտնվեցին սոցիալ-տնտեսական նոր պայմաններում, որոնց դրական կամ բացասական ազդեցությամբ էլ դրանցից յուրաքանչյուրը ստեղծեց տվյալ ազգ-պետությանը բնորոշ սոցիալական միջավայր: Վերջինս էլ իր հերթին սկիզբ դրեց սոցիալական նոր մշակույթի ու ինքնության ձևավորմանը՝ հիմնվելով նախկին ներուժի և կերպափոխված ձեռքբերումների վրա: Ինքնատիպ սոցիալականացում, որտեղ «հասարակայնանում», վերաիմաստավորվում ու սոցիալական ռեֆլեքսիայի են ենթարկվում հանրային և անհատական շահերը, պահանջունքները, նպատակներն ու դրդապատճառները: Նոր սոցիալական միջավայրը ձևավորեց հիմնախնդիրների և կոնֆլիկտների լուծման այնպիսի ընթացակարգեր, որոնց արդյունավետությունը պայմանավորված է սոցիալական հարցերի կարգավորման աստիճանով: Նոր սոցիետալ համակարգը բնութագրվում է տնտեսական, սոցիալ-մշակութային ու քաղաքական իրավիճակների անկայունությամբ, ինչպես նաև քաղաքականության սուբյեկտների կարգավիճակների փոխակերպմամբ: Քանի որ անցումային իրավիճակը «սոցիալական փոխակերպման սահմանագիծն է»⁷:

Չեխոսլովակիայի հասարակությունների սոցիալ-քաղաքական կյանքում ընթացող ինստիտուցիոնալ փոխակերպումները հանգեցրին նախկին ինստիտուցիոնալ համակարգի արմատական փոփոխմանն ու ինստիտուցիոնալ անկայունության առաջացմանը: Նոր ինստիտուցիոնալ համակարգը ձգտում է կառուցվածքային-գործառնական փոփոխություններով ներդնել զարգացած երկրների փորձը՝ ձևավորելով ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների նոր մակարդակ: Չեխոսլովակիայի քաղաքական համակարգերում կոնվենցիոնալ փոխգործակցության մշակութային լեգիտիմացիան և արժեքային կարգավորումն օժտված են մի շարք առանձնահատկություններով: Դրանցից ամենաէականը սոցիալական գործընկերության և երկխոսության բացակայությունն է: Եվ դա այն դեպքում, երբ հասարակական կյանքում սոցիալական փոխակերպումները բարեհաջող են, երբ այդ գործընթացում ներգրավված հանրային սուբյեկտներն առաջնորդվում են սոցիալական գործընկերության⁸ սկզբունքով, ինչն էլ իր հերթին նպաստում է հասարակական հարաբերությունների կայուն զարգացմանն ու սոցիալական պատասխանատվության ձևավորմանը: Այս հիմնահարցի համակողմանի վերլուծությունը հրատապ նշանակություն


⁶ Տե՛ս **Bowen H. R.** Social responsibilities of the businessman. N. Y., 1953, էջ 6:

⁷ **Гнүтов А. Б.** Социальная трансформация как фактор дисфункциональности гражданской социализации молодежи // "Теория и практика общественного развития", 2007, № 1, с. 50.

⁸ Ավելի մանրամասն տե՛ս **Casey B. H.** Building social partnership? Strengths and Shortcomings of the European Employment Strategy // Transfer: European Review of Labour and Research, 2005, Vol.11, № 1, էջ 45-63, **Mailand M.** Social partnership as an Approach to CSR: 'Traditional' and 'New' Actors, their Roles and Relations // European Review of Labour and Research, 2004, Vol.10, № 3, էջ 416-432, **Gollan P. J.** Transporting the European Social Partnership Model to Australia // Journal of Industrial Relations, 2006, Vol.48, № 2, էջ 217-256 և ուրիշներ:

ունի ոչ միայն քաղաքագիտության, տնտեսագիտության, հանրային կառավարման, այլև սոցիոլոգիայի, իրավագիտության, հոգեբանության և հասարակական մյուս գիտությունների բնագավառում:

Սոցիալական երկխոսության համակարգը



Ձառգացած երկրներում զգալի է արհեստակցական միությունների տեղն ու դերը հասարակության սոցիալական կյանքում, սոցիալական հարաբերությունների կարգավորման, ինչպես նաև մարդու սոցիալական իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործընթացում⁹: Արհեստակցական միությունների գործունեության բնագավառում կուտակված առաջադեմ փորձի համարժեք կիրառումը կարող է առանցքային նշանակություն ունենալ զարգացող երկրների հանրային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում: Հատկապես, եթե նկատի առնվեն հանրային հիմնահարցերի կարգավորման գործընթացում ներքին վերահսկման ընթացակարգերի կարևորությունն ու հրատապությունը:

Քաղաքականության սուբյեկտների միջև արդյունավետ համագործակցությունը հնարավոր է, եթե դրանց և հանրային ինստիտուտների միջև առկա են սոցիալական փոխվստահության, սոցիալական գործընկերության¹⁰, քաղաքացիական երկխոսության ու համաձայնության ընթացակարգեր:

Համաշխարհայնացման արդի պայմաններում¹¹ ազգերի, սոցիալական խմբերի, կուսակցությունների, սոցիալական շարժումների և ինստիտուտների միջև աճում են սոցիալական հարաբերությունների բախումնաժին դրսևո-

⁹ Այդ մասին տես **Harcourt M., Wood G.** (eds.). Trade Unions and Democracy: Strategies and Perspectives. Transaction Publishers, 2006, **Blanpain R., Dickens L.** (eds.) Challenges in European Employment Relations: Employment Regulation, Trade Union Organization, Equality, Flexibility, Training & New Approaches to Pay. Kluwer Law International, 2008, **Bowers J., Duggan M., Reade D.** The Law of Industrial Action and Trade Union Recognition. Oxford University Press, 2004, **Faber G., Orbie J.** (eds.). European Union Trade Politics and Development: "Everything but Arms" Unraveled. Routledge, 2007 և ուրիշներ:

¹⁰ Այդ մասին տես **Frege C. M.** Social Partnership at Work. Workplace Relations in Post-Unification Germany. Routledge: Routledge Studies in Employment Relations, 1999, էջ 57-76, 137-156, **Lewis J.** Austria in Historical Perspective: From Civil War to Social Partnership, in: **Berger S., Compston H.** (eds.). Policy Concertation and Social Partnership in Western Europe: Lessons for the 21st Century. Berghahn Books, 2002, էջ 19-35 և ուրիշներ:

¹¹ Այդ մասին տես **Dean H.** Social Policy. Polity Press, 2006, էջ 32-39, 97-107 և ուրիշներ:

րունները: Ազգային և վերազգային սոցիումի համար խիստ կարևորվում է սոցիալ-տնտեսական, քաղաքական, էթնոնշակութային, կրոնական և հանրային նշանակություն ունեցող հակասությունների կարգավորումը: Ներպետական և վերազգային մակարդակներում առկա չկարգավորված հանրային հիմնախնդիրները հաճախ ձևավորում են հակացիվիլիարիսիկ ընթացակարգեր: Արդյունքը լինում է այն, որ ստեղծվում են ճգնաժամային, բախումնային, քառային կամ էլ ամբոխավարական իրավիճակներ ու միտումներ, որոնք վտանգում են քաղաքացիավարական կայունությունը:

Հասարակական հարաբերությունների զարգացման պայմաններում ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ նույնիսկ ժողովրդավարական քաղաքական համակարգ ունեցող պետությունը կամ պետությունների միությունները, տարածաշրջանային և միջազգային կառավարական կազմակերպությունները ոչ միշտ են կարողանում արդյունավետորեն կարգավորել առկա հիմնահարցերը: Այս առումով քաղաքացիական հասարակության ինստիտուտներն առանցքային դերակատարում ունեն հանրային քաղաքականության հիմնահարցերի կարգավորման գործընթացում: Ընդ որում, քաղաքացիական հասարակության ինստիտուտներն ակտիվ դերակատարում ունեն ոչ միայն ներպետական, այլև վերազգային մակարդակում՝ նպաստելով սոցիալական գործընկերության¹² գլոբալ միջավայրի կայացմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է ներհասարակական կազմակերպման (ինքնակազմակերպման), սոցիալական ներառվածության և վերահսկողության (ինքնավերահսկողության) ընթացակարգերի ստեղծմանը: Այդպիսով, քաղաքացիական հասարակության ինստիտուտները կարողանում են նախաձեռնողական գործողությունների միջոցով ապահովել սոցիալական փոխվստահություն, երկխոսություն և հրատապ քաղաքացիական մասնակցություն որոշումների նախապատրաստման, ընդունման ու իրականացման փուլերում: Հասարակաբար կառավարման արդյունքում իրականացվող գործողություններն ու հարաբերությունները ձևավորում են ինքնատիպ քաղաքացիավարական ցանցեր, որոնք հիմնված են փոխհամաձայնության և փոխզիջման վրա:

Յուրաքանչյուր սոցիումի մեջ քաղաքացիավարությունն ունի սոցիալական և էթնոնշակութային առանձնահատկություններ, որոնք պետք է նկատի առնել սոցիալական գործընկերության ընթացակարգերի ձևավորման համար: Ըստ Յու. Ռեզնիկի՝ «քաղաքացիական համաձայնության կառուցվածքային վերլուծությունը ենթադրում է դրա հետազոտումը որպես ինքնուրույն սուբյեկտների փոխգործակցության համակարգ, որը ներառում է գործընթացը (գործընթացային կողմը), եղանակը (տեխնոլոգիական կողմը) ու արդյունքը (առարկայական կողմը) և իրականացվում է փոխհամաձայնեցված (կոնվենցիոնալ) նորմերի ու կանոնների հիման

¹² Այդ մասին տե՛ս **Ananiadis B. P.** Globalization, Welfare and «Social» Partnership // Global Social Policy, 2003, Vol.3, № 2, էջ 213-233, **Atkinson T., Cantillon B., Marlier E., Nolan B.** Social Indicators: The EU and Social Inclusion. Oxford University Press, 2003, էջ 1-5, 19-37 և ուրիշներ:

Ըստ Յու. Ռեզնիկի՝ «կառուցողական փոխգործակցությունը, որպեսզի լինի բարեհաջող (ունենա դրական արդյունքներ), պետք է ունենա կոնվենցիոնալ բնույթ» (**Резник Ю. М.** Гражданское согласие как основа конструктивного социокультурного взаимодействия субъектов в современном обществе // «Цивилизация», № 7, 2006, с. 107):

վրա՝ դրսևորվելով տարբեր մակարդակներում և տարատեսակ ձևերով»¹³: Ըստ այդմ, նա կոնվենցիոնալ փոխգործակցությունը սահմանում է որպես «փոխգործակցող սուբյեկտների դիրքորոշումների, պատկերացումների, կարծիքների, գնահատականների համաձայնեցման գործընթաց»¹⁴:

Քաղաքացիական համաձայնությունը «փոխգործակցության մասնակիցների միջև հարաբերականորեն շարժունակ և փոփոխական փոխըմբռնման չափն է (աստիճանը), որն առաջանում է նրանց համատեղ կյանքի և գործունեության սոցիալական դիրքորոշումների, ինչպես նաև իրավիճակների կամ իրադարձությունների մասին պատկերացումների նմանության (կամ համընկնման) հիման վրա»¹⁵:

Քաղաքացիական համաձայնությունը կառուցողական փոխգործակցության նախադրյալ է, որն առավել լիարժեքորեն իրականացվում է քաղաքացիական հասարակության մեջ: Այս առումով «քաղաքացիական համաձայնությունը սուբյեկտների կոնվենցիոնալ փոխգործակցության (փոխադարձ համաձայնությունների) համակարգ է (եղանակ, գործընթաց և արդյունք), որոնց շնորհիվ ընդունվում և պահպանվում են ընդհանուր դիրքորոշումներն ու «խաղի կանոնները»՝ համապատասխանելով ինքնուրույն սուբյեկտների և նրանց համատեղ գործողությունների իրականացման գործընթացին»¹⁶:

Հասարակական հարաբերությունների փոխակերպման ժամանակակից պայմաններում ձևավորվում են բարձր, չեզոք և ցածր սոցիալական լարվածությամբ օժտված իրավիճակներ, որտեղ «քաղաքացիական համաձայնությունը»՝ հազիվ թե միակ ուժն է, որն ընդունակ է հաշտեցնելու հակամարտող կողմերին և տանելու նրանց միջև սուր հակասությունների համաձայնեցված կարգավորմանը»¹⁷: Ժամանակակից սոցիումի մեջ քաղաքացիական համաձայնությունն իրականացվում է հետևյալ փոխկապակցված մակարդակներում՝ միջանձնային, տարածաշրջանային, սոցիետալ և գլոբալ^{***}: Ընդ որում, ինքնուրույն սուբյեկտների կոնվենցիոնալ փոխգործակցությունը կարող է լինել՝ «պատահական-կանոնավոր», «կարճաժամկետ-երկարաժամկետ», «բաց-փակ», «համընդհանուր-բազմաձև» և այլն: Ըստ Յու. Ռեզնիկի՝ «կոնվենցիոնալ փոխգործակցության մակարդակների շեր-

¹³ Резник Ю. М., նշվ. աշխ., էջ 107:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

^{**} Ընդ որում, «քաղաքացիական համաձայնությունն ինքնուրույն սուբյեկտների կոնվենցիոնալ (փոխհամաձայնեցված) փոխգործակցման գործընթաց է, որն իրականացվում է մարդկության համընդհանուր (սեռային) շահերի ուղղությամբ» (Резник Ю. М., նշվ. աշխ., էջ 109):

¹⁷ Նույն տեղում, էջ 109:

^{***} Վերջինս, ըստ Ռեզնիկի, լինում է. «(1) միջանձնային, որը ներառում է շարքային քաղաքացիների կողմից ստեղծված միավորումների ներսում նախաձեռնողական տեսակի-հաղորդակցությունների կոնվենցիոնալ փոխգործակցությունը, (2) տարածաշրջանային, որը ներկայացնում է կոնվենցիոնալ փոխգործակցությունը տվյալ երկրի խոշոր շրջանների և քաղաքների քաղաքացիական կազմակերպությունների սահմաններում, (3) սոցիետալ, որն արտացոլում է կոնվենցիոնալ փոխգործակցությունների առկա ինստիտուցիոնալ կառուցվածքն ամբողջ հասարակության կամ դրա ենթահամակարգի մակարդակում, (4) գլոբալ, որն արտացոլում է ժողովրդավարական կարգ ունեցող ժողովուրդների և երկրների (ասոցիացված ներկայացուցիչների) սուբյեկտների միջև կոնվենցիոնալ փոխգործակցության որոշակի ձևերը» (Резник Ю. М., նշվ. աշխ., էջ 109-110):

տավորման համալիր չափանիշ կարելի է դիտել «համաձայնության ծավալը» (սուբյեկտների համաձայնեցվածության աստիճանը և դիրքորոշումների ու պատկերացումների ընդգրկունության լայնությունը, որոնք ներառված են փոխգործակցության կոնկրետ գործընթացում)¹⁸: Ներկայացված չափանիշին համապատասխան առանձնացվում են սուբյեկտների միջև կոնվենցիոնալ փոխգործակցության մի շարք ձևեր և դրանց համապատասխան համաձայնության տեսակներ՝ կոնվենցիոնալ շփումներ, կոնվենցիոնալ շրջան, կոնվենցիոնալ խումբ, կոնվենցիոնալ կազմակերպություններ և միավորումներ, կոնվենցիոնալ միություններ և դաշինքներ^{****}:

Միջսուբյեկտային մակարդակում քաղաքացիական համաձայնությունը դիրքային հավասարակշռության ձեռքբերման գործընթաց է, ինչը ենթադրում է. «Դիրքային հավասարակշռությունը քաղաքացիական համաձայնության համար ոչ թե ինքնանպատակ է, այլ կարևորագույն պայման՝ ապահովել միջանձնային մակարդակում կոնվենցիոնալ փոխգործակցության բոլոր մասնակիցների ինքնուրույն և ազատ ընտրությունը»¹⁹: Քաղաքացիավարական կայունության ապահովման տեսանկյունից հրատապ նշանակություն ունեն քաղաքացիական համաձայնության ինստիտուցիոնալացումը և գործընթացը, ընթացակարգերը, կապերը: Չնայած այն հանգամանքին, որ մի շարք մտածողների կարծիքով «քաղաքացիական համաձայնությունը որպես սոցիալական գործընթաց հնարավոր է միայն որոշակի քաղաքացիական մշակույթի համատեքստում»²⁰, այնուամենայնիվ առանց քաղաքացիական համաձայնության նվազագույն ընթացակարգերի առկայության անհնար է ապահովել քաղաքացիական մշակույթի կայացումը: Քանի որ քաղաքացիական համաձայնությունը հիմնվում է համագործակցային սոցիալական պատասխանատվության ու սոցիալական գործընկերության վրա²¹, որոնք էլ անհրաժեշտ նախապայման են քաղաքացիավարական լեգիտիմություն ապահովելու համար:

¹⁸ Նույն տեղում, էջ 110:

^{****} Վերջինս, ըստ Ռեզնիկի, լինում է. «ա) *կոնվենցիոնալ շփումներ* (փոխգործակցության ձև, որի հիմքում ընկած է սուբյեկտների միջև ժամանակային կամ պատահական համաձայնություններ), բ) *կոնվենցիոնալ շրջան* (սուբյեկտների փոխգործակցության պարբերաբար կրկնվող և ինքնավերարտադրվող ձև, որը ձևավորվում է դրանց կարճաժամկետ բնույթի առանձին շահերի ու համաձայնությունների միասնության հիման վրա), գ) *կոնվենցիոնալ խումբ* (սուբյեկտների փոխգործակցության կայուն ձև, որն առաջանում է կենսակերպի և պայմանների նմանության, ընդհանուր քաղաքացիական շահերի ու արժեքների ճանաչման, ինչպես նաև երկարաժամկետ բնույթի համաձայնությունների հիման վրա), դ) *կոնվենցիոնալ կազմակերպություններ և միավորումներ* (սուբյեկտների փոխգործակցության կազմակերպական ձևեր, որոնք առաջանում են դրանց քաղաքացիական ինքնագործունեության ընդհանուր ծրագրերի մշակման և իրականացման հիման վրա), ե) *կոնվենցիոնալ միություններ և դաշինքներ* (փոխգործակցության ձև, որն առաջանում է մարդկանց մեծ խմբերի միջև՝ քաղաքացիական հասարակության «խնդրահարույց կետերը» և համակարգային հակասությունները լուծելու համար)» (Резник Ю. М., նշվ. աշխ., էջ 109-110):

¹⁹ Նույն տեղում, էջ 111:

²⁰ Նույն տեղում, էջ 113:

²¹ Տե՛ս Baglioni M. Interest representation between social partnership and solidarity, in: European Review of Labour and Research, 2006, Vol.12, № 3, էջ 427-445, Алексеева Е. Ю. «Трёхсторонние» отношения власти, бизнеса и общества в современной России //«Социология власти», 2007, № 5, էջ 97-105:

Ըստ Յու. Ռեզնիկի՝ քաղաքացիական համաձայնության ինստիտուցիոնալացման ընթացակարգերն են. 1) քաղաքացիական վերահսկողության և քաղաքացիական կյանքի նորմատիվ կարգավորման ընթացակարգերը, 2) քաղաքացիական լեգիտիմացման ընթացակարգերը, 3) քաղաքացիական կյանքի արժեքային կարգավորման ընթացակարգերը, 4) քաղաքացիական ինքնության ձևավորման ընթացակարգերը:

Սոցիալական քաղաքականության²² արդյունավետ իրականացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն ոչ միայն սոցիալական ինստիտուտները, սոցիալական նորմերն ու արժեքները, այլև սոցիալական վերահսկողության ընթացակարգերը: Այսպես, օրինակ՝ ըստ Յու. Ռեզնիկի՝ քաղաքացիական հասարակության մեջ սոցիալական վերահսկողությունն իրականացվում է հետևյալ ձևերով՝ ռեֆլեքսիվ (ինքնահսկողություն), ոչ ձևական (հասարակական կարծիք) և ձևական (սանկցիաների համակարգ)²³: Սակայն քաղաքացիական հասարակության համակարգում առավելապես ազդեցիկ են «սոցիալական վերահսկողության ընթացակարգերի ռեֆլեքսիվ և ոչ ձևական տեսանկյունները»²⁴: Քաղաքացիական հասարակության համակարգի կայացման տեսանկյունից վերահսկողության սոցիալական չափումներն առանցքային նշանակություն ունեն քաղաքացիավարական լեգիտիմության ու համաձայնության ինստիտուցիոնալ ընթացակարգերի համար: Այսպես, օրինակ՝ ըստ Յու. Ռեզնիկի՝ քաղաքացիական հասարակության հարաբերությամբ առկա են լեգիտիմացման հետևյալ տեսակները՝ նորմատիվ, արժեքային, սիմվոլիկ (խորհրդանշական), գործնական²⁵: Միաժամանակ, քաղաքացիավարական լեգիտիմության վրա ազդող սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային գործոնների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս դիտարկելու նաև քաղաքական համակարգի ու վարչակարգի կայունության միտումները:

Այսպիսով, կարևորելով սոցիալական գործընկերության համակարգի կայացման գործընթացը, կարելի է առանձնացնել հետևյալ բնորոշ գծերը.

- սոցիալական գործընկերությունը սոցիալական քաղաքականության սուբյեկտների (գործընկերների) միջև հարաբերությունների համակարգ է, որն ապահովում է հիմնահարցերի (լարվածության, հակասությունների, կոնֆլիկտների) քաղաքացիավարական կարգավորումն ու

²² Տե՛ս **Amitsis G.** Principles and Instruments of Social Inclusion Policies in Europe, in: **Sakellariopoulos T., Ashwin S.** Social Partnership or a 'Complete Sellout'? Russian Trade Unions' Responses to Conflict. British Journal of Industrial Relations, 2004, Vol. 42, (March), № 1, էջ 23-46, **Berghman J.** (eds.). Connecting Welfare Diversity within the European Social Model, Vocational Training S.A., 2001, էջ 139-188:

«քաղաքացիական համաձայնության ընթացակարգերի ինստիտուցիոնալացման հետազոտման հարաբերությամբ սոցիալական վերահսկողությունը նշանակում է հետևյալը. քաղաքացիական հասարակության ներսում համաձայնությունը միջնորդավորվում է նախ և առաջ կոնվենցիոնալ նորմերի օգնությամբ ու փոխգործակցության մասնակիցների դերային սպասումների հետ դրանց միավորմամբ, որոնք ձգտում են իրականացնելու ամբողջ մարդկության համընդհանուր (դերային) շահերը» (**Резник Ю. М.**, նշվ. աշխ., էջ 115):

²³ Տե՛ս **Резник Ю. М.**, նշվ. աշխ., էջ 115:

²⁴ Նույն տեղում, էջ 117:

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 118 [(1) նորմատիվ լեգիտիմացում, (2) արժեքային լեգիտիմացում, (3) խորհրդանշային լեգիտիմացում, (4) պրակտիկ լեգիտիմացում]:

փոխհամաձայնության ձեռքբերումը՝ հիմնվելով մասնակցիների շահերի ու իրավահավասարության վրա,

- սոցիալական գործընկերության համակարգը ներառում է սահմանադրաիրավական հենքը՝ ինստիտուտներ, սուբյեկտներ, գործառույթներ, մշակույթ, հարաբերությունների կարգավորման ընթացակարգեր,

- սոցիալական գործընկերության ընթացակարգը քաղաքացիավարական այն գործիքների ու մեթոդների ամբողջությունն է, որոնց միջոցով ձևավորվում և ամրապնդվում են սոցիալական քաղաքականության սուբյեկտների միջև գործընկերային հարաբերությունները,

- սոցիալական գործընկերության և երկխոսության ավանդույթները (արհմիություններ, գործատուներ, պետություն) նպաստում են ժողովրդավարական քաղաքական համակարգի, քաղաքացիավարական կայունության ու մշակույթի կայացմանը: Սոցիալական գործընկերությունն արդի շուկայական տնտեսության ինստիտուտ է (սոցիալական շուկայական տնտեսություն),

- սոցիալական երկխոսությունը հանրային քաղաքականության սուբյեկտների միջև առանձնահատուկ փոխգործակցության ձև է, տեղեկատվական-հաղորդակցական գործունեության բաղկացուցիչ մաս, որն ապահովում է հետադարձ կապ ու հանրագուտ որոշումների ընդունում,

- սոցիալական երկխոսությունը հանրային իշխանության ռեսուրսն է, իրականացման եղանակն ու ռազմավարությունը, որն ապահովում է ներհասարակական ինտեգրացիան՝ նվազեցնելով սոցիալական ռիսկերը,

- սոցիալական գործընկերության համակարգի կայացման գործընթացում առանցքային դերակատարում ունեն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունեն սոցիալական աուդիտի ազգային մոդելի մշակումն ու իրականացումը,

- արհեստակցական միությունները որպես սոցիալական գործընկերության «չարժուճակ կողմ» իրականացնում են քաղաքացիավարական սոցիալականացման գործընթաց՝ ապահովելով ակտիվ սոցիալական երկխոսության ընթացակարգ,

- սոցիալական գործընկերության շնորհիվ անընդհատ կատարելագործվում են սոցիալական երկխոսության պաշտպանության ներպետական և միջազգային ընթացակարգերն ու չափանիշները,

- սոցիալական գործընկերության համակարգը նպաստում է քաղաքացիավարական կայունությանը, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալացմանը, քաղաքացիական հասարակության ակտիվացմանը: Այն պետության սոցիալական (սոցիալական պետության) և իրավական (իրավական պետության) գործառույթների իրականացման ու ընդլայնման երաշխիքն է, սոցիալական հիմնախնդիրների արդյունավետ կարգավորման ընթացակարգը,

- սոցիալական գործընկերության ընթացակարգերը սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացը դարձնում են առավել հրապարակային,

- սոցիալական գործընկերությունը ձևավորում է սոցիալական պատասխանատվության ինքնատիպ ընթացակարգ՝ իրականացնելով քաղա-

քականության սուբյեկտների ինքնափոխակերպման և համագործակցային կառավարման մշակույթ:

АШОТ АЛЕКСАНИЯН – К вопросу о социальном партнерстве. – Сравнительный анализ социального партнерства и социального диалога, их становления и развития – весьма актуальное научное направление на постсоветском пространстве. Социальное измерение политических процессов и институтов фиксирует, что конфликтность общественных отношений возрастает, при этом эффективные механизмы разрешения социальных проблем отсутствуют. Социальная политика в постсоветских странах не способствует общественной интеграции. Очевидно, что степень развития механизмов социального партнерства в этих странах непосредственно влияет на их цивилиархическую стабильность. В процессе европейской и евразийской интеграции необходимо, прежде всего, выработать цивилиархические механизмы социального партнерства и социального контроля; это позволит обеспечить устойчивое развитие качества жизни, безопасности, социального взаимодействия и диалога.

ASHOT ALEXANYAN – On social partnership. – Comparative analysis of the formation and development of social partnership, social dialogue, and social responsibility is highly relevant to the Post-Soviet space. Analysis of the social dimension of political processes and institutions shows growing conflict of social relations, as well as the absence of effective mechanisms for resolving social problems. Social policy in Post-Soviet countries is not conducive to social integration. Obviously, the degree of development of mechanisms of social partnership depends on civiliarchic stability of Post-Soviet countries. In the process of European and Eurasian integration, it is necessary, above all, to develop the civiliarchic mechanisms of social partnership and social control to ensure sustainable development, quality of life, human security, social interaction, and dialogue.